

էր նրան մասնակից դարձնել հայ ազատագրական պայքարին: Բայց Արշակը մահացավ պատանի հասակում (Ա. Ք. Иоаннисян. Иосиф Эмин. Ереван, 1945, с. 258).

16. Շամիրամ աղա—Շահամիր Սուլթանում Շահամիրյան (1723—1797 թթ.): XVIII դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման եռանդուն անդամներից մեկը, Մաղրասի հայրենասիրական խմբակի ոգեշնչողն ու հիմնադիրը:

17. Փիլիպպոս Մանուչարյանը ջուղայցիցի Աստվածատուրի որդին էր, որն իր եղբոր՝ Մարգարի հետ հաստատվել էր Պետերբուրգում և հիմնել մետաքսի ֆաբրիկա: Մանուչարյան եղբայրները մշտապես զբաղրութուն ունեին հայոց կաթողիկոսի հետ և երբեմն արժեքավոր նվերներ էին ուղարկում նրան: Հ. Արղությանի խնդրանքով 1780 թ. նոյեմբերի 21-ին Ղուկաս կաթողիկոսը նրանց տեղեկանք էր տվել ազնվական ծագում ունենալու մասին (ԴՀՊ, Գ, էջ 516—518): 1782 թ. օգոստոսի 23-ին նրանք զբաղվոր դիմել էին կաթողիկոսին և առաջարկել էջմիածնում ստեղծել դպրոց «Ըստ երոսպական լեզուաց»: Կաթողիկոսը պատասխանել է, թե դա անկարելի է. «Ջի մեր լեզուալ դպրատուն, գոր ունիմք ի սուրբ Աթոռոջս՝ հազիւ պահեմք հաստատուն» (ԴՀՊ, Գ, Քիֆլիս, 1899, էջ 482):

18. Բոռան Պրոսպան է:

19. Փաստաթղթերի վերջում (չորրորդ էջի վրա) նույն ձևով գրված է. «Աղայ Դափթ, Թուլթս այս տպել տացես և ընդ քեզ պահեսցես»: Այլ ձևով գրված է. «Հանեալ ի դուաննն 1919 մարտ... և նոյն»:

20. Իսրայել Օրու և նրա զործուներության վերաբերյալ էմինի բացասական կարծիքը արդյունք է անգլիացի հեղինակ Ջոնաս Հենվելիի ճամփորդական նոթերի ազդեցություն: Վերջինս XVIII դարի 40-ական թթ. եղել է Իրանում և 1753 թ. հրատարակել իր ճանապարհորդության նկարագրությունը: Ի դեմս հայ վաճառականների նա տեսնում էր Մերձավոր Արևելքում անգլիական առևտրական կապիտալի լուրջ մրցակիցներին: Այստեղից էլ գալիս է նրա հակակրանքը հայ վաճառականների և ուսաց թագավորի կողմից Իրան ուղարկված Ի. Օրու նկատմամբ (Ա. Ք. Иоаннисян. Указ. соч., с. 69): էմինն անձամբ ծանոթ էր Ջ. Հենվելիի հետ և լոնդոնում նրա օգնությամբ էր անձնագիր ստացել Ռուսաստան մեկնելու համար (Ն. տ. էջ 46):

21. Մանսար—արաբերեն բառ է, նշանակում է հանրագիր, համախոսական նամակ:

22. Այս թուրքերեն ասացվածքը փոքր-ինչ ազավազված է, մոտավոր թարգմանությունը կլինի՝ «Ջրից երևիս շի լինի»:

23. Թուրքերեն ասացվածքը աղավաղված է և չի թարգմանվում:

24. Նոսխալ—արաբերեն բառ է, նշանակում է ղեղաժամ:

25. էմինի կինը և զավակները ի վերջո կարողանում են հեռանալ նոր Ջուղայից և գնում են Կալվաթա՝ էմինի մոտ (Ա. Ք. Иоаннисян. Указ. соч., с. 258):

26. Փանաբի—նշանակում է շնիթ, նվաստ, խեղճ, հետին:

27. Մանարտակ—բառ Հր. Աճառյանի նշանակում է «համախոսական, բոլորի ստորագրությամբ մատուցված թուղթ կամ խղիթը» (Հր. Աճառյան. Հայերեն արձատական բառարան. հ. Բ, Երևան, 1973, էջ 444): Այստեղ օգտագործված է եզակի թվով՝ նամակ կամ խնդրագիր:

28. Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» էմինի մանասիրելի գրքերից մեկն էր: Երբ նա առաջին անգամ մեկնում է Հայաստան և հյուրընկալվում Ճինիա գյուղում, հայ գյուղացիների մեջ պատագրական պայքարի կոչ անելուս դիմում է Խորենացու պատմության օգնությունը, որը միշտ ունեի իր հետ (Հովսեփի էմինի կյանքն ու արվածները, էջ 156):

29. Թարգմանությունն է՝ «Իմացողին մեկ ասա, լիմացողին հազար ասա»:

30. Թարգմանությունն է՝ «Մորը տես, աղջկան առ, նմուշը տես, կտորը առ»:

31. Չաքիկենց Գրիգոր Միքայելը հնդկահայ մեծահարուստ էր, Մաղրասի հայրենասիրական խմբակի անդամներից մեկը, որի անունն այն ժամանակ գրվում էր՝ «Իշխան Գրիգոր աղայ Ջուղայցիի Խոջամալխան, Չաքիկենց կոչեալ»: Նա մեծ ծառայություն ունի հայ տպագրական գործի զարգացման ասպարեզում. նրա միջոցներով է էջմիածնում 1776 թ. ստեղծվել Ս. Գրիգոր Լուսավորչի անվան տպարանը, իսկ 1774 թ.՝ թղթի գործարանը: Գ. Խոջամալյանը պատրաստ էր մեծ գումարներ տրամադրել Հայաստանի ազատագրման գործը կազմակերպելու համար:

32. էմինի տեղեկությունները թղթի գործարանի մասին հիշտ չեն: Գ. Խոջամալյանի նվիրաբերած գումարներով Սիմեոն Երևանցի կաթողիկոսը 1774 թ. էջմիածնում ֆրանսիացի վարպետների միջոցով հիմնադրել էր թղթի գործարան, որը գործել է նաև Ղուկաս կաթողի-